ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » ապրիլի 2019 թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի՝ Ձեզ ենք ներկայացնում «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (*Պ-066-21.03.2019-ՏՀ-011/0*) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

(*Պ-066-21.03.2019-ՏՀ-011/0*) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է ավելացված արժեքի հարկից ազատման արտոնությունը սահմանել միայն Հայաստանի Հանրապետությունում աճեցված տոհմային կենդանի խոշոր եղջերավոր անասունների օտարման գործարքների մասով, եթե դրանք օտարվում են անհատ ձեռնարկատեր չհամարվող ֆիզիկական անձանց: Ստորև նշվում են ներկայացված առաջարկության համար հիմք հանդիսացող հանգամանքները՝

1) Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 59-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգավորումներին համապատասխան՝ գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղվող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը մինչև ավելացված արժեքի հարկի շեմը գերազանցելը գյուղատնտեսական արտադրանքի օտարման գործարքների մասով ավելացված արժեքի հարկ չեն հաշվարկում ու չեն վճարում.

2) օրենսգրքի 126-րդ հոդվածին համապատասխան՝ շահութահարկի վճարումից ազատվում են գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղված շահութահարկ վճարողները՝ իրենց կողմից գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացվող եկամտի, ինչպես նաև այլ ակտիվների իրացումից ստացվող և այլ եկամուտների մասով, եթե այլ ակտիվների իրացումից ստացվող և այլ եկամուտների տեսակարար կշիռը համապատասխան հարկային տարվա համախառն եկամտի մեջ չի գերազանցում տասը տոկոսը: Եկամտային հարկի հաշվարկման առումով, օրենսգրքի 148-րդ հոդվածին համապատասխան՝ հարկման բազան որոշելու նպատակով նվազեցվող եկամուտներ են

համարվում նաև գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղված ֆիզիկական անձանց՝ օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացվող եկամուտները.

3) «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնց ներմուծումն ազատված է ավելացված արժեքի հարկից» Հայաստանի Հանրապետության օրենքով ավելացված արժեքի հարկից ազատվում է նաև տոհմային կենդանի խոշոր եղջերավոր անասունների (ԱՏԳ ԱԱ 0102 21 ծածկագիր) ներմուծումը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ գյուղատնտեսության, այդ թվում՝ անասնաբուծության ոլորտի զարգացման խթանման համար համապատասխան կարգավորումները, մասնավորապես, հարկերից ազատման արտոնության տեսքով սահմանված են գործող հարկային օրենսդրությամբ, հետևաբար, ներկայացված հիմնավորմամբ տոհմային անասնաբուծության զարգացումը խթանելու նպատակով ավելացված արժեքի հարկից ազատման արտոնությունների շրջանակն ընդլայնելու հետ կապված ներկայացնում է իր առաջարկությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 մայիսի 2019 թվականի N 494 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի տեղակալ Գառնիկ Պետրոսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (*Պ-066-21.03.2019-ՏՀ-011/0*) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. մայիսի 6
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Պ-066-21.03.2019-ՏՀ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգիրք 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հо-165-Ն օրենքի 64-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել նոր 52-րդ կետով.

«52) Հայաստանի Հանրապետության տարածքում տոհմային կենդանի խոշոր եղջերավոր անասունների օտարումը:

Սույն կետով սահմանված արտոնությունների կիրառության շրջանակը սահմանում է Կառավարությունը:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ-ում 2007-2015 թվականներին իրականացվել է տավարաբուծության զարգացման ծրագիր: Ծրագրով նախատեսվում էր որակապես բարելավել տավարաբուծության ուղղությամբ իրականացվող տոհմասելեկցիոն աշխատանքները, աջակցել տոհմային տնտեսությունների ձեւավորմանը, նպաստել գյուղատնտեսական կենդանիների մթերատվության բարձրացմանը եւ խթանել հայրենական սելեկցիայի արդյունքում ստեղծված կովկասյան գորշ ցեղի գենոֆոնդի պահպանման գործընթացը:

Ծրագրի շրջանակներում պետական աջակցությամբ արտերկրից ձեռք են բերվել աշխարհում ամենաբարձր կաթնատվություն ունեցող հոլշտինյան, ինչպես նաեւ շվից, սիմենթալ ցեղի երինջներ եւ լիզինգային եղանակով հատկացվել գյուղական բնակչությանը:

Ընդհանուր առմամբ ծրագրի վրա ծախսվել է շուրջ 3 մլրդ դրամ, ՀՀ է ներկրվել 2506 գլուխ տոհմային երինջներ:

Ըստ գյուղատնտեսության նախարարության տեղեկանքի, ներկայումս ՀՀ-ում առկա են շուրջ 3000 գլուխ տոհմային խոշոր եղջերավոր կենդանիներ:

2005 թվականին ընդունվել է տոհմային անասնաբուծության մասին ՀՀ օրենքը, որով սահմանվում են «տոհմային կենդանի», «տոհմային կենդանիների պետական գրանցում», «գյուղատնտեսական կենդանիների պետական տոհմային գիրք» հասկացությունները, ՀՀ կառավարության իրավասությունները տոհմային անասնաբուծության ոլորտում, այդ թվում՝ պետական տոհմային գրքերի, տոհմային կենդանիների, նախիրների, հոտերի ու երամակների կադաստրի վարման կանոնակարգումը, ոլորտում կառավարության լիազորած պետական մարմնի իրավասությունները, այդ թվում՝ տոհմային կենդանիների, նախիրների, հոտերի, երամակների կադաստրի եւ տոհմային գրքերի վարման կարգի կազմակերպումը:

Այսօր էլ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը ծրագրեր է նախապատրաստել տոհմային անասնապահությունը զարգացնելու եւ տոհմային երինջների ներկրումը Հայաստանի Հանրապետություն շարունակելու ուղղությամբ:

Ներկրված տոհմային երինջների սերունդներն ունեն մեծ պահանջարկ թե Հայաստանում, թե Հայաստանի սահմաններից դուրս:

Պահանջարկի հիմնական պատճառը ոչ միայն նրանց բարձր մթերատվությունն է, այլ նաեւ այն, որ ներկրվող երինջները խիստ զգայուն են բնակլիմայական փոփոխությունների նկատմամբ, ինչն էլ հանգեցնում է սկզբնական շրջանում երինջների գլխաքանակի անկման, իսկ տեղում ստացված սերունդը արդեն հարմարվել է Հայաստանի բնակլիմայական պայմաններին: Երկրորդ կարեւոր հանգամանքն այն է, որ անասնատերերին ձեռնտու է կենդանիները վաճառել Հայաստանի սահմաններից դուրս, քանի որ այդ դեպքում իրացումն ազատված է ԱԱՀ-ից: Այս դեպքում առաջանում են տոհմային խոշոր եղջերավոր կենդանիները հարեւան երկիր արտահանելու երկկողմ շահեր, ինչն էլ մեծ վնաս է հասցնում ՀՀ-ին՝ տոհմային անասնապահությունը զարգացնելու ծրագրի իրագործման բնականոն ընթացքն ապահովելու տեսանկյունից:

Եթե Հայաստանի Հանրապետության տարածքում տոհմային խոշոր եղջերավոր կենդանիների վաճառքն ազատվի ԱԱՀ-ից, կնվազի վաճառքի գինն առնվազն 20 տոկոսով եւ դա շահավետ կլինի եւ վաճառողի, եւ տեղացի գնորդի համար: Վաճառողն այլեւս ստիպված չի լինի հավելյալ ծախսեր կատարել իր ապրանքը արտահանելու համար, տեղացի գնորդն էլ ստիպված չի լինի կենդանի ձեռք բերել դրսում, քանի որ ԽԵԿ-ների ներմուծումը նույնպես ազատված է ավելացված արժեքի հարկից:

Նախագիծը միտված է լուծելու հետեւյալ խնդիրները.

- նպաստել անասնաբուծության, հատկապես տոհմային անասնաբուծության զարգացմանը,

- նպաստել տոհմային փոքր եւ միջին տնտեսությունների զարգացմանը,

- ապահովել տոհմաբուծության զարգացման ծրագրի շարունակականությունը եւ արդյունավետությունը,

- նպաստել տավարի մսի եւ կաթի արտադրության ծավալների ավելացմանը

- նպաստել շուկայում տեղական տավարաբուծական արտադրանքի մրցունակության եւ ճյուղի շահութաբերության մակարդակի բարձրացմանը,

- նպաստել նախիրներում տոհմային կենդանիների մասնաբաժնի ավելացմանը:

Ըստ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության տվյալների 2018 թվականին հանրապետություն ներկրվել է 853 գլուխ խոշոր եղջերավոր կենդանի, որից 214 գլուխը օգտագործվել է հետագա բուծման նպատակով, իսկ մնացածը իրացվել է մսի: Ըստ Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության պետական մարմնի տվյալների 2018 թվականին հանրապետությունից արտահանվել է 3122 գլուխ խոշոր եղջերավոր կենդանի, որից 83 գլուխը տոհմային:

Առաջարկվող լուծումները

Նախագծով առաջարկվում է ՀՀ հարկային օրենսգրքի « Ավելացված արժեքի հարկով հարկման օբյեկտը» 64-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել նոր 52-րդ կետով, որով կսահմանվի տոհմային խոշոր եղջերավոր կենդանիների օտարումը Հայաստանի Հանրապետության տարածքում ավելացված արժեքի հարկից ազատելու մասին դրույթ: